



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 6-Լ

ԼՂՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 100.2-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով 2015 թվականի ապրիլի 10-ին կնքված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի և Արդարադատության ակադեմիայի միջև համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. ԼՂՀ դատավորների վերապատրաստումը կազմակերպել «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

2. Հաստատել «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացրած դատավորների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագիրը:

ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

31 մարտի 2017թ.
ք. Ստեփանակերտ